



ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

Տարի 10, Թիւ 103 Մարտ 2002

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ՍՔԱՆՉԵԼԻՔ

«Ու քարը գերեզմանէն մէկոյի գլորուած գտան. եւ ներս մտնելով Տէր Յիսուսի մարմինը հոն չգտան»։ Դուկասու 24:2, 3

Աշխարհի պատմութիւնը օժտուած հնութիւններով, մեզի կը ներկայացնէ Աքքանջելիներ, որոնք ուշագրաւ, յատուկ տեղ մը ունեցած են պատմութեան մէջ:

Մինչեւ այսօր լիակատար չէ ըմբռնուած Եգիպտոսի բուրգերուն շինարարական կերպը, որ կը ներկայացուի հին օրերու քրանջելի, բարգերու կողքին կը կազմեն հետեւեալները. Բաբելոնի կախուած պարտէզները (Եփրատի եզերքին, Նաբուգոթոնոսոր թագաւորի օրերուն). Ջեսի արձանը Օլիմպիայի մէջ (Յունաստան). Արտեմիսի տաճարը Եփեսոսի մէջ. Հիլիոսի արձանը, Ռոտոս կղզիին վրայ (Միջերկրականի մէջ). Հէլիքորնասոսի շիրիմը (Պարսկաստանի մէջ) եւ Աղէքսանդրիոյ փարոսը (Եգիպտոսի մէջ):

Այս յիշեալ քրանջելիները աշխարհի մէջ են. միթական են ու ժամանակաւոր: Կայ ու կը մնայ հոգեւոր անզուգական քրանջելիներու շարք մը առնուած մեր Տիրոջ յարութեան դէպքէն:

1. Սքանջելի քարը — «քարը գլորուած գտան»:

Այս քարը, կնքուած Պիղատոսի կնիքով, որուն քով Հոովմէացի զինուորները կը հսկէին, գլորուած էր:

Երբ Աստուծոյ թշնամիներուն կողմէ, հսկայ քարեր կը դրոյին Քրիստոսի առջեւ, անոնք դիպրութեամբ կը վերցոյին. երբ Աստուծոյ հրեշտակին ձեռքերը կը հանգչին այդ քարին վրայ: Ո՞վ կրնայ արգելք ըլլալ երբ ան կը յայտնուի: Քարը գլորուած է:

2. Սքանջելի գերեզման — «Յիսուսի մարմինը հոն չգտան»:

Յիսուս այդտեղ թաղուած էր, բայց հիմա գերեզմանը պարապ է:

Մարմինը պարփակող կտաւը հոն էր, սակայն մարմինը չկար: Գերեզմանը պարապ էր: Ահաւասիկ աստուածութեան ապացոյցներէն մէկը եւ քրիստոնէութեան անզուգականութիւնը. մինչ բոլոր կրօններու առաջնորդներուն գերեզմանները լեցուն են, իսկ մերը պարապ է: Փառք Աստուծոյ:

3. Սքանջելի տեսիլք — «Երկու մարդեր լուսափայլ հանդերձներով»:

Երբ ոմանք Յիսուսի ետեւէն երթալով, հասան մինչեւ գերեզման, ունեցան

առանձնաշնորհը տեսնելու այս «մարդերը» (հրեշտակները): Երկնային սքանչելի տեսիլք:

Ամէն տեղ, նոյնիսկ խաւար մեկուսացուած գերեզմանը սրբուած եւ լուսատրուած է, որովհետեւ Յիսուս հոն գտնուած է: Յարուցեալ կեանքի փառքը առաջին անգամ տեսան Յիսուսի գերեզմանին մէջ:

4. Սքանչելի պատգամը — «Հոս չէ, հապա յարութիւն առաւ»:

Բոլոր զօրութիւնները երկրի եւ դժոխքի չկրցան զինք կեցնել: Այս հրեշտակները յիշեցին Յիսուսի խօսքերը, մինչ աշակերտները մոռցած էին:

Դիպրութեամբ կը մոռնանք այն բաները որոնց չենք հաւատար: Ահա սքանչելի յարութեան պատգամը:

5. Սքանչելի կասկածամտութիւնը — «չէին հաւատար անոնց»:

Տէրը յստակօրէն ըսած էր, թէ յարութիւն պիտի առնէ երրորդ օրը:

Հիմա երկու կիներ, Մարիամ Մագթաղեմացի եւ Յակոբոսի մայրը Մարիամ, վկայեցին Յիսուսի յարութեան վրայով, սակայն կրկին չեն հաւատար: Կասկածամտութիւն, թերահաւատութիւն եւ անհաւատութիւն սարսափելի բաներ ան: Թող Աստուած անոնցմէ գերծ պահէ մեզ:

6. Սքանչելի խօսակցութիւնը —

Էմմաուս գիւղի ճամբորդները կը խօսէին: Յիսուս մօտեցաւ անոնց: Յիսուս կ'արտորայ լսել իրմէ վախցողներու խօսակցութիւնը:

Ոչ մէկ գիտնական անելի հետաքրքրուած էր իր հնարածով, որքան այս մարդերը այն տեղեկութեամբ թէ, Յիսուս յարութիւն առած է:

Հոգեւոր խօսակցութիւնները լաւ են, բայց երբ կենդանի Քրիստոսը չկայ, այդ խօսակցութիւնները ամբողջութեամբ պարսպ են: Կարեւոր խօսակցութիւն ունի՞ս կեանքիդ մէջ:

7. Սքանչելի օտարականը —

Օտարականը Քրիստոս ինքն է: Չէ որ Քրիստոսի պէտք էր այս չարչարանքները կրել եւ իր փառքը մտնել: Տէրը կը հաճի ինքզինք յայտնել զինք փնտրողներուն:

Անիկան 11-ին երեցաւ ու անոնք չհաւատացին:

Տէրը ամէն օր սքանչելի կերպերով մեզի կը յայտնուի, ուրախացնելու եւ հաստատելու համար:

Ահա յարութեան դէպքին հետ կապուած եօթը հրաշալիքներ, անոնցմով տեսնենք Աստուծոյ զօրութիւնը որ արգելքներ չճանչնար, գերեզման մը որ պարսպ է, հաւատարմութեամբ առնենք յարութեան պատգամը, մեր խօսակցութիւնները Քրիստոսակերորոն ըլլան ու Տիրոջը ներկայութիւնը զգանք եւ վայելենք:

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ

Կիրակի -	Առաւօտեան 11-ին Պաշտամունք Մանուկներու Կիրակնօրեայ
Երեքշաբթի -	Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
Հինգշաբթի -	7-ին Երիտասարդաց Սերտողութիւն 8:30-ին Երգչախումբի Փորձ
Ուրբաթ -	Առաւօտեան 10:30-ին Քոյրերու Ժողով 7:30-ին Պատանաց
Ծաբաթ -	Ամէն Ամսուայ Վերջին Ծաբաթը Երեկոյեան 7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԷՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Փետրուարի Յոդ Կիրակին մեր երեցներեն Գեորգ Թովնեանի յիշատակի պաշտամունքն էր: Չասակներն ու եղբայրները Իդրաբեր քրոջ հետ Աերկայ էին: Ընթերցուեցաւ Լուսինէ Թովնեանի գրութիւնը իր հօր նուիրում, մեներգ, ուրիշ գրութիւն հանգուցեալին աագ որդին, Յարութիւնը արտապայտութիւններ ունեցաւ ու հովիւը պատգամեց «Յիշելու կարեւորութիւնը» միթիւն շուրջ: Ապա որպէս յարգանք մեր եղբօր յիշատակին, եկեղեցին կազմակերպած էր ճոխ հիւրասիրութիւն մը:
- Փետրուարի 20-ին Գարեգին Ասլանեան բաւական երկար հիւանդանոցային օրեր բոլորելէ ետք երկնագնաց եղաւ: Յուղարկատրութիւնը կատարուեցաւ 23-ի կէսօրին: Մեր սրտագին ցաակցութիւնները ընտանեկան պարագաներուն՝ յատկապէս Սրբուհի եւ Արմենուհի քոյրերուն: Տէրը այս առիթով այցելէ բոլոր Ասլանեանները ու առաջնորդէ հոգեւոր կեանքի:
- Տէրը կամի Մարտ 1-ին համաշխարհային Կանանց Աղօթքի օր է, մեր քոյրերու ժողովը տեղի չունենար: Անոնք տարբեր եկեղեցիներէ կը հաւաքուին Կլէմտէլի Կաթողիկէ եկեղեցաշէնքին մէջ միթ ունենալով «հաշտութիւն»:
- Նոյն օրը Մարտ 1-ի իրիկունը Տիրոջ շնորհքով կը հաւաքուինք Կլէմտէլի Նազովրեցիի եկեղեցաշէնքին մէջ, միասին, երկու եկեղեցիներով աղօթածողով մը ունենալու:
- Ինչպէս անցեալ տարի, այս տարի ես կը ծրագրուի դաշտագնացութիւն մը ունենալ. Տէրը կամի պիտի ունենանք Մայիս 27-ին: Այս թուականը վերապահենք միասին ըլլալու բնութեան ծոցին մէջ:
- Փետրուար 24-ին Անդամական ժողովը ունեցանք: Բոլոր եկեղեցապատկան մարմինները իրենց տեղեկութիւնները ու հաշիւները ներկայացուցին: Երթալի Արարատ Աւետարանական եկեղեցիէն ներկայացուցիչ չկար, սակայն տեղեկագրութիւնը որկած էին ու քարտողարուհին կարողացաւ: Գննարկման միթեր ներկայացուեցան հովիւին կողմէ, ինչպէս եկեղեցաշէնքի, թաղային ժողովներու եւ անձնական աւետարանչութեան հարցերը:
- Թէեւ կ'ապրինք հայրենիքէն հեռու, սակայն հեռատրութիւն չկայ երբ այդտեղ ապրող եւ գործող հաասակիցներ մեր սրտերուն մէջ ունինք: Ուստի կը խնդրուի աղօթել Հայրենիքի եկեղեցիներուն համար, յատկապէս Արեւշատի, Արարատի, Մասիսի, Չանգակատունի, Սրգաւանի եւ Նշաւանի ժողովները յիշելով:
- Փետրուար 17-ին Կլէմտէլի Մկրտական եկեղեցիի ճոր տարեդարձն էր ու նաեւ ձեռնադրութեան պաշտամունքը երիտասարդ օգնականի մը: Մեր հովիւը հրաւիրում էր պատգամելու, մեր եկեղեցիէն ալ մի քանի հաասացեալներ ներկայ էին:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Կրօնները կ'ըսեն, ըրէ. Քրիստոնէութիւնը կ'ըսէ կատարում է:*
- ◆ *Յարութիւնը մահէն յաիտենական կեանքի փոխադրուիլ է. երկրէն երկինք երթալ է:*
- ◆ *Յարութիւնը ցոյց կու տայ թէ ես յաիտենական Աստուծոյ հետ կրնամ ապրիլ, հակառակ ներթոյթեան, հիւանդութեան եւ մահուման:*
- ◆ *Մեր Տէրը յարութեան յօտումը գրած է ոչ թէ գրքի մէջ ալ գարնանային ամէն տերեւի վրայ:*

ԻՄ ՀԱՅՐԻԿԻՍ

Հայր իմ սիրելի, հայր իմ գովելի
Ավա՛ղ կտրվեց կյանքիդ թելը հանկարծակի
Եվ հեռացար դու մեզանից շատ անսպասելի
Դաժան մահը շատ շուտ խլեց ինձանից:

Դեմքդ պայծառ էր արեւի շողերի պես ժպտերես
Փայլուն տեսքդ, ուրախ սիրտդ
Վառ կարոտով կհիշեմ
Ավա՛ղ ինչպես խոսք հասկացնեմ իմ սրտիս
Որ դու չկաս եւ չես շնչում էլ ընդմիջտ:

Դու շատ իղձեր, ցանկություններ
Ունեիր դեռ երազած, որոնք ավա՛ղ
Երազ մնաց անկատար.
Դու հայր էիր անտրտունջ ու անդադար
Եվ միշտ կյանքի կոչով էիր տոգորված:

Հիմա փայլուն հրեշտակ ես բարցունքում,
Ու ժպտում ես քո շորերով շողշողուն,
Եվ քո աստղը միշտ կփայլի
Հավերժական երկնքում:

Բայց ավաղ այլեւս չեմ վայելում
Փայլուն տեսքդ, անուշ խոսքը շրթունքիդ
Որը թեւ էր տալիս եւ հորդորում ամենքին:

Իմ թանկագին, իմ անուշիկ
Հայր իմ սիրասուն
Քո թանկագին հիշատակը
Վառ կմնա սրտիս ներքին խորքերում:

Վարդերի եւ ծաղիկների մեջ անթառամ
Դու կմնաս Եդեմական քո պարտեզում հավիտյան:

Լուսինէ Թոփճեան

Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: www.aebcm.org – E-mail: aebcministries@aol.com